ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 27-ի նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2015թ. փետրվարի 27-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**:

Մասնակցում էին՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ,

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ.

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ՝ Մարդու իրավունքների պաշտպան,

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ,

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Որպես Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ՝ նիստն արձանագրում էր ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ **ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆԸ**:

Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցը.

1. Գնահատման արդյունքների ամփոփման գործընթացին զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության հարց:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ, ՈՐ՝

2015 թվականի փետրվարի 26-ին և 27-ին Հանձնաժողովը անցկացրել է հարցազրույցի փուլը, որին մասնակցել են 14 հավակնորդներ:

Հարցազրույցի փուլին անմիջապես պետք է հաջորդի մասնակիցների գնահատման գործընթացը:

Հանձնաժողովը գտնում է, որ մասնակիցների գնահատման գործընթացին չեն կարող մասնակցել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Նախագահի 02.08.2014թ. թիվ ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի գործունեությունը հիմնված է թեկնածուների ընտրության պայմանների հավասարության, ընթացակարգի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ Մրցույթի հարցազրույցի փուլին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ հանձնաժողովի կողմից սահմանված կարգին համապատասխան:

Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 2-Լ որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում հայաստանի հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 9-րդ կետի համաձայն՝ Զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են մասնակցել մրցույթի հարցազրույցի փուլին, եթե հարցազրույցի օրից առնվազն երկու օր առաջ համապատասխան դիմում ներկայացնեն աշխատակազմին:

Հանձնաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների դրա բաշխումը, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը, ինչպես նաև գնահատման և միավորների հաշվարկման կարգը սահմանելու մասին» 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 3-Լ որոշման 10-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հարցազրույցի յուրաքանչյուր մասնակցի գնահատումն իրականացնում է բոլոր մասնակիցների հարցազրույցներն ավարտելուց հետո:

Վերոհիշյալ կանոններից հետևում է, որ զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հարցազրույցին, մինչդեռ հարցազրույցն ավարտվել է և հանձնաժողովը պետք է անցնի գնահատման գործընթացին, որին ի դեպ կարող են մասնակցել միայն հարցազրույցի փուլում Հանձնաժողովի նիստին ներկա Հանձնաժողովի անդամները:

Հանձնաժողովն արձանագրում է , որ հարցազրույցի փուլին հնարավորություն է տրվել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին անկաշկանդ իրացնել իրենց իրավունքները: Ավելին, հարցազրույցի փուլն ամբողջությամբ տեսաձայնագրվել է, իսկ Հանձնաժողովի որոշումները, այդ թվում գնահատման արդյունքում ընդունվելիք որոշումն ենթակա է սահմանված կարգով հրապարակման:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑ.

Արձանագրել, որ գնահատման արդյունքների ամփոփմանը զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը սահմանված կարգով նախատեսված չէ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Արձանագրող՝ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ